Սահմանի միւս կողմը մեր եղբայրներին կոտորող և մեր իսկ գիւղերին յուսալքում ու մահ բերող հայկական հրոսախմբերին հետապնդելը հանդիսանում է օրինական պաշտպանութեան մի հանգամանք և մեր ազգի համար կենսական իրաւունք: Թիւրք ժողովուրդը ո՛չ մի յարձակողական նպատակներ չի սնուցանում ո՛չ հայ ժողովրդի, ո՛չ էլ որև է այլ ժողովրդի նկատմամբ: Թափուած արեան պատասխանատուութիւնը ընկնում է միմիայն հայերի և նրանց իմպերիալիստ պաշտպանների վրա, որոնք հետապնդում են Թիւրք ազգը քայքայելու նպատակներ»:

Դժուար չէր տեսնել, որ տուած բացատրութիւնները չէին համապատասխանում իրականութեան և որ Թիւրքերի իսկական նպատակը Հայաստանի քայքայումն ու Սևրի դաշնագրի ոչնչացումն էր: Թիւրքական յարձակողականը այդպէս էլ հասկացուեց ամենքի կողմից: Հայկական բոլոր շրջաններն անխտիր, ամէն տեղ, ցասումով ընդունեցին պատերազմի լուրը: Ընդհանուր վրդովումի և դիմադրութեան վճռական կամքի արտայայտութիւն եղաւ կառավարութեան կոչը ժողովրդին.

Հայաստանի Քաղաքացիներին,

Քաղաքացինե՛ր, Հայաստանը նոր փորձութիւնների առաջ է կանգնած: Տաճիկ փաշաները չեն ուզում հանդիստ թողնել մեզ. նրանք ձգտում են քար ու քանդ անել մեր երկիրը, բնաջնջել հայ ժողովուրդը:

Սեպտեմբերի կէսերին կենտրոնանալով Մերդենեկի և Բարդուսի շրջաններում՝ տաճիկ զօրքերը յարձակման դիմեցին: Դաշտային աշխատանքների պատճառով մեր զինուորների մի մասը իրենց տները ցրուած լինելով՝ մեր զօրամասերը, յամառ կռուից յետոյ, ստիպուած եղան նահանջել և գրաւել ռազմագիտական նոր դիծ, որով ածխահանքերի շրջանը անցաւ թշնամու ձեռքը:

Սեպտ. 28-ի գիշերը տաճիկները ուժեղ յարձակման դիմեցին Փենեակի և Բարդուսի ճակատներում: Մեր զօրամասերը սաստիկ դիմադրութիւն ցոյց տալով՝ ամրացան Վերիշէնի բարձունքների վրա: Նոյն սեպտ. 28-ին տաճկական խոշոր ուժեր գրոհ տուին դէպի Կարաուրդան, որտեղից մեր զօրքերը քաշուեցին Սողանլուխ լեռնաշղթան: Ցայտնի է դարձել, որ տաճիկների անմիջական նպատակն է կտրել Սարըղամիշ—Կարս երկաթուղին և ազատութիւնից զրկել Սարըղամիշի և Կաղզուանի զօրքերն ու ժողովուրդը: Անակնկալներից և զոհերից խուսափելու և աւելի յարմար դիրքեր գրաւելու նպատակով՝ մեր հրամանատարութիւնը սեպտ. 29-ի գիշերը դատարկել է Սարըղամիշն ու Կաղզուանը:

Ժողովուրդը նոյնպէս տեղափոխուել է անվնաս: Նահանջը եղել է ռազմագիտական նպատակներով, կանոնաւոր և առանց որև է կորուստի: Մեր զօրքերի ոգին բարձր է: Թշնամին հանդիպում է ամենաբուռն դիմադրութեան: Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններում սկսուած է ուժեղ շարժում յօդուտ երկրի պաշտպանութեան: Ամէն կողմից հասնում են կամաւորներ և վերադառնում են դասալիքները: Դաշտային աշխատանքներով կլանուած ժողովուրդը ոտքի է կանգնում:

Քաղաքացինե՛ր, տեղեկացնելով ձեզ այս մասին՝ Հանրապետութեան կառավարութիւնը յայտնում է, որ ինքը ձեռք է առնում ամէն միջոց՝ պետութեան անվտանգութիւնն ապահովելու համար և վստահ է, որ նենգ